Բարձրապիւ Տ. Մաստէոս վարդապետի Մաստէոսեանց.

«Արարատ» գոլով պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝ տպագրի հրամանաւ Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց կամ՝ Տեղակալի Նորին և պարտի բովանդակել յինքեան կրօնական–եկեղեցական, գրական բանասիրական նիւթս խմբագրեալս ըստ ամենայնի համեմատ ոգւոյ Հայաստանեայց Սրբոյ եկեղեցւոյ։ Ի վերջին ժամանակս «Արարատ» չեղեալ է յիսկական նպատակէ և ի կոչմանէ իւրմէ, ուստի և արձակելով զՏ. Գարեգին վարդապետն Յովսէփեան ի պաշտօնէ խմբագրութեան, կարգեմ զԲարձրապատուութիւն Ձեր խմբագիր «Արարատ» ամսագրի։ Աներկմիտ եմք, եթէ դուք բարեխղճօրէն ի գործ եդեալ զեռանդն Ձեր և զաշխատասիրութիւն, արժանի կացուցանելոց էք «զԱրարատ» կոչման իւրում՝ որպէս պաշտօնական և նպատակին՝ որպէս կրօնական ամսագիր։

Յարակցելով, թէ պատուիրեալ եմք Տ. Գարեգին վարդապետի զամենայն թղթեանս և զհաշիւս վերաբերեալս խմբագրութեան «Արարատ» ամսագրի ընդ ստանալ առաջադրութեան իմոյ անմիջապէս յանձնել Ձեզ։

Թ. 666

5 Նոյեմբերի 1908 թ.

Տեղակալ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՀԵՌԱԳԻՐ

Փոխարքայի ի պատասխան Ամենապատիւ Տ. Տեղակալի հեռագրի տուած հոկտեմբերի 30-ից.

Ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսի Տեղապահ Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանցին.

Պատրիարք Կաթուղիկոս ընտրելու համար հաւաքուած պատգամաւորների կողմից Ձեր 30 հոկտեմբերի

ուղարկած հեռագիրը ներկայացրել է Բարձրագոյն բարեհայեցողութեան Ստատս սեկրետար Բարոն Նոլդէ։ Այս ամենահպատակօրէն զեկուցման վրայ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ իսկական ձեռքով մակագրել է՝ «Անկեղծ շնորհակալ եմ արտայայտած զգացմունքների համար»։

Այս մասին հաղորդում եմ Ձերդ Սրբազնութեան յայտարարելու պատգամաւորական ժողովին։

Գենեբալ-Ադիւտանտ

Կոմս Վորոնցով Դաշկով

Թ. 29972

Տեղակալ ամենայն Հայոց Կաթուղիկոսի Ամենապատիւ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը հոկտեմբերի 30-ին հետեւեալ հեռագիրն է ուղարկել Կովկասի Փոխարքայ Կոմս Վորոնցով Դաշկովի անունով.

«Այսօր, պատարագից և Թագաւոր Կայսեր ու ամբողջ Թագաւորական Տան ողջութեան համար կատարուած հանդիսաւոր մաղթանքից յետոյ բացուեց ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք ընտրելու համար Ռուսաստանից, Թիւրքիայից, Պարսկաստանից, Եգիպտոսից, Հնդկաստանից, Բոլղարիայից, Ռումինիայից հաւաքուած պատգամաւորների ժողովը։

«Պատգամաւորական ժողովը, համակուած անծայր երախտագիտութեամբ առ Թագաւոր Կայսեր Սրբազան Անձը, Նրա բարձր ողորմածաբար հայ ժողովրդին շնորհած հովանաւորութեան համար, ամենախոնարհաբար խնդրում է Ձերդ պայծառավայլութեան ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ոտքերի տակ դնել հայ ժողովրդի անսահման սիրոյ և անձնուիրութեան զգացմունքը»

Այս հեռագրի բովանդակութիւնը Փոխարքայի օգնական գեներալ Շատիլով հեռագրով փոխադրեց Ստատս-սեկրետար Բարոն Է. Ի. Նոլդէին՝ Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր ամենախոնարհաբար զեկուցանելու։

ՏՓԽԻՍ

Փոխարքային Կովկասու Կոմս Վորոնցով-Դաշկովի.

Խոնարհաբար խնդրեմ ի Ձերդ Պայծառափայլութիւնէ արկանել յոտս ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ թագաւոր Կայսեր զզգացմունս խորին վշտի միաբանութեան Էջմիածնի ի պատճառս մահու Օգոստափառ հօրեղբօր Նորին Մեծութեան Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովչի. ի կիւրակէի ի Մայր Տաճարի Ս. Էջմիածնի ունիմք կատարել զհանդիսաւոր հոգեհանդիստ վասն ի Տէր հանգուցեալ Մեծ Իշխանին։

Տեղակալ Կաթուղիկոսի ամենայն Հայոց
Գէորգ Արքեպիսկոպոս

ԷՋՄԻԱԾԻՆ

Տեղակալի Պատրիարք Կաթուղիկոսի Գէորգ Արքեպիսկոպոսի.

Ի վերայ ամենահպատականօրէն զեկուցման Ստաւրոս Սեկրետար Բարոն Նօլդէի, որում զեկուցեալ է իմ զիմաստս հեռագրի Ձերոյ, որ յանուն իմ ի 6-էն նոյեմբերի, ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ բարեհաճեալ է իւրով ձեռամբ գծել «Ընթերցայ հաճութեամբ», զորմէ ծանուցանեմ Ձերդ Բարձր Սրբազնութեան։

Գեներալ Ադիւտանտ
Կոմս Վորոնցով-Դաշկով